ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 112-Ա

«10» սեպտեմբերի 2020 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՂՋԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ, 08-091-015-019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԵԿ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի «բ» ենթակետի, 48-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Արտուշ Անուշիկի Մակարյանի դիմումը

ո ր ո շ ու մ եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ողջի բնակավայրում տեղակայված, Արտուշ Անուշիկի Մակարյանի սեփականությունը հանդիսացող, 08-091-015-019 կադաստրային ծածկագրով 1,1138 հեկտար ընդհանուր մակերեսով մեկ միավոր անշարժ գույքի բաժանման հետևանքով երկու միավոր գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

1. 08-091-015-019 կադաստրային ծածկագրում գտնվող 8738 քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը հասցեավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ողջի բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 61:
2. 08-091-015-019 կադաստրային ծածկագրում գտնվող 2400 քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը հասցեավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ողջի բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 61/1:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ
ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«10» սեպտեմբերի 2020 թվական
գյուղ Ամասիա